

ՀԱՐՑՈՒՄ

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ մատուցվող ծառայության որակի հետ կապված հարցում է իրականացրել մայրաքաղաքի Արաբկիր և Էրեբունի համայնքների, Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի և Արմավիրի մարզի Սարդարաբադ գյուղի շուրջ 705 բնակիչ-բաժանորդների հետ/ 16-18 օգոստոսի/:

Արաբկիր համայնք	150 հարցված
Էրեբունի համայնք	100 հարցված
ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան	345 հարցված
Արմավիրի մարզ, գ. Սարդարաբադ	110 հարցված

Հարցման արդյունքների համաձայն, հարցվածների 50,7 % -ը Ընկերության կողմից մատուցվող ծառայության որակը գնահատել է լավ 43,4 % -ը բավարար, 5,2 % -ը անբավարար:

Մատուցվող ծառայության նկատմամբ Ձեր վերաբերմունքը

լավ	358	50,7 %
բավարար	306	43,4 %
անբավարար	37	5,2 %

Բնական գազի մատակարարման և օգտագործման անվտանգության կանոններին, Մատակարար-սպառող իրավահարաբերություններին, իրավունքներին ու պարտականություններին որքանով են բնակիչ-բաժանորդները տեղյակ, հարցվածների 86,6 %-ը պատասխանել է դրական: 12,2 %-ը նշել է անբավարար տեղեկացվածության մասին:

Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների և իրավահարաբերությունների վերաբերյալ տեղեկացվածությունը

Բավարար տեղեկացվածություն	611	86,6 %
անբավարար տեղեկացվածություն	86	12,1 %

Դիմումատուի հարցին կամ խնդրին լուծում տալը հարցվածների 71,6 %-ը համարում է որ կատարվում է ժամանակին, 8,2 %-ը գտնում է որ անհարկի ձգձգվում է:

Դիմումատուի հարցին կամ խնդրին լուծում տալու ժամանակահատվածը

Կատարվում է ժամանակին	505	71,6 %
անհարկի ձգձգվում է	58	8,2 %

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ- ի կողմից իրականացվող ակցիաները որքանով են մատչելի, հարցվածների 50 %- ը նշել է, որ օգտվել է ձձ հազար դրամ կանխավճարի գեղչի արտոնությունից: Ընդ որում , ապրիլի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը ներառյալ, հանրապետությունում առանց կանխավճարը մուծելու բաժանորդ է դարձել 30000 բնակիչ: Այդ թվում Երևանում 13186, Արմավիրում 471, Աբովյանում 1450: Ներտնային շինահավաքակցման աշխատանքների համար բանկերի կողմից տրամադրվող վարկային միջոցներից օգտվել են հարցվածների 6,8 %- ը կամ 48 բաժանորդ:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ –ի կողմից իրականացվող ակցիաների մատչելիությունը

40 հազար դրամ կանխավճարի գեղչ	353	50 %
Վարկերի տրամադրում	48	6,8 %

1-04 ծառայության աշխատանքի օպերատիվության հետ կապված, հարցվածների 48,3 %- ը գտնում է , որ արագ են արձագանքում, 7,3 %- ի կարծիքով՝ արագ չեն արձագանքում: Հետևաբար ծառայությանը դիմել է հարցվածների 55,6 %- ը: Մնացած հարցվածները չեն դիմել ծառայությանը:

1-04 ծառայության օպերատիվությունը

արագ են արձագանքում	341	48,3 %
արագ չեն արձագանքում	52	7,3 %

Ինչ վերաբերում է ծառայություն մատուցող աշխատակիցների մասնագիտական որակավորմանը և դրսևորած վերաբերմունքին, ապա հարցվածների 85,9 %-ը պատասխանել է , որ ուշադիր են և փորձում են օգնել, 5,6 %- ի կարծիքով՝ բարեհամբյուր չեն, իսկ 1,2 %-ը չի ճանաչում աշխատակիցներին:

Ծառայություն մարուցող աշխատակիցների մասնագիտական որակավորումը և դրսևորված վերաբերմունքը

ուշադիր են և փորձում են օգնել	606	85,9 %
բարեհամբյուր չեն	40	5,6 %
չենք ճանաչում	11	

Առաջարկությունները կամ բողոքները հիմնականում վերաբերվում են բնական գազի բարձր համարվող սակագնին, ներտնային տեխնիկական սպասարկման ծառայության աշխատանքներին և վարձավճարներին, գազանջատումների մասին տեղեկատվությանը: